2. Հեղափոխական կուսակցությանց կողմէ դեսպանատանց գիր մը տրվելու մասին դեսպանին կարծիքը պիտի առնվի:
3. Դեսպանը պիտի տեսնեմ, Վանգենհայմի հետ խոսակցելեն հետո:

Վերջեն թարգմանը ուզեց – եթէ կարելի է մեր միջոցով ճշգրիտ պայմանները գիտնալ թուրքաց և արաբաց մեջ գոյացած համաձայնության:

Այսօրվան տպավորությունս քաջալերիչ է. Ռուսիա՝ Ֆրանսիայի և Անգլիոյ լքումին տեղ Բոսալիան և Ավստրիան և քիչ մըն ալ Գերմանիան դեպի իրեն քաշելու ճամբան բռնած կ'ըլլի:

ԽՈՍՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՆ.ՇԵՆԸԵՐԳԻ ՀԵՏ

Ուրբաթ 30 Օգոս./ 12 Մեպտ. 1913 թ./

Պրն. Շենքերգը Գերմանիոյ դեսպանատան մեր մասին ունեցած բարյացակամ տրամադրությունները կրկնելով, ըսավ որ անիկա գործնական բան մը՝ սկզբնավորություն մը կրադա բարենորոգմանց խնդրույն մեջ, ուստի կզգուշանա այն ամեն բաներեն որոնք *irreductible opposition*-ի մը տեղի կուտան թուրքաց կողմեն, այսպէս շարժելով հայոց օգտին կաշխատին, հայոց, զոր կնկատեմ աշխատասեր և աջակից տարր որուն վրա *compter*-ի կրնա ընել: Կուզեմ ցրել այն կարծիքը հայոց որ դեսպանատունը կդիմադրէ բարենորոգմանց, ընդհակառակը նա անոր հաջողելուն կբաղձա:

Պատվիրակ - Այս տեսակցության մեջ ես ավելի կարևորություն կընծայեմ հայոց և գերմանացոց միացման քան թէ հայ-թուրքաց վեճին: Այսօր իրավ որ հայերը շատ զարմացած տեսնելով գերմանական դեսպանատանն տաճկաց տե-

սակետին համար միայն աշխատող, տաճիկները քաջալերող և հայերը վհատեցնող:

Շեռներգը բողոքեց ասոր դեմ:

Եվ չէք կրնար ուրանալ սակայն տաճկաց 1 հուլիս շրջաբերականը հիմք ընելով պատվիրակներու համաժողովին մեջ, նույնիսկ պահ մը ավելորդ դատեցիք հայկական բարենորոգումներով զբաղիլ: Եվ ասիկա շատ մոտեն գիտեմ: Գիտեմ նաև որ գերմանական դեսպանատունն իր խորհուրդներովն էր, որ *inspecteur ge'ne'ral*- ներու հատուկ օրինագիծը, հապճեպով միայն ռուսական *projet*-ն ջուրը ձգելու համար շինված, հրատարակվեցավ այնքան հապճեպով, որ զայն պատրաստող կառավարությունը միջոց և ժամանակ չունեցավ զայն հաշտեցնելու օրենքին հետ և կամ բանավոր և լուրջ հանգամանք մը տալու համար անոր: Այսպես ըլլալը նույնիսկ Թալաաթ բեյը ինձի խոստովանեցավ, կտեսնեք, որ վավերական տեղեկությանց վրա կ'իստիք:

Շեռներգը - Քանի որ պատվիրակներու հանձնաժողովին թուղթերը կարդացեր էք...

Պատվիրակ - Ո՛հ, չեմ կարդացեր, բայց կրցած եմ քիչ մը տեղեկություններ առնել [Իրականում Ձոհրապը քաջատեղյակ էր դեսպանությունների պատվիրակների Ենի-քյոյի համաժողովի արձանագրություններից: Այդ մասին ռուսաց դեսպան Մ. Ն. Գիրսը գաղտնիորեն հոգացել էր – Մ.Մ.]:

Շեռներգը - Շատ լավ, այն ստեն տեսած ըլլալու էք որ Գերմանիան, Ավստրիան, վերջին նիստին բավական լուրջ բարենորոգումներ առաջարկած են, դուք անհնարին բաներ պահանջելով և համառելով /մեկ վիլայեթի կազմություն, տերությանց հավանությունը *inspecteur ge'ne'ral*-ի անվանումին և այլն/ բարենորոգմանց *irre'alisable* ըլլալուն պատճառ կ'ըլլար: Վասնզի թուրքերը - և շատ խորին կերպով համոզված ենք ասոր - մինչև վերջ պիտի ընդդիմանան ասոնց. ի՞նչի պիտի հանգի ասոր վերջը, ոչնչի: Բռնի՞ ուժ գործածել, ասիկա ոչ մի պետություն կուզե, այդ միջոցով միայն ձեռք բերվելիք բաներ չեն, ըսել է. ա՛յն է նախամեծարը քեզ, բայց անմիջապես գործադրելի, թե շատ բայց անհնարին:

Պատվիրակ - Հայերը գործնական մտքի տեր մարդիկ են, տեսեք անոնք *autonomie* անգամ չեն պահանջեր: Մինչդեռ արաբները պահանջած են զայն, բայց միանգամայն չեն կրնար հրաժարիլ այնպիսի պայմաններէ դուրս բարենորոգմանց իրական / և ոչ թե ձևի համար և խաբեբա կերպով / գործադրման համար անհրաժեշտ կնկատեն: Օրինակի համար սա վայրկյանիս ձեր ըսած խոսքին պատասխանելով հիմակուց ըսեմ ձեզի որ առանց պետությանց հավանության օտարականք մը Հայաստանի մեջ բարենորոգմանց գլուխ նշանակվիլը հայերը չեն ընդունիր, և անօգուտ է եթե այս էական պայմանը չընդունի այս գործով զբաղիլ: Լավագույն է, որ հայերը իրենց ճակատագրին թողունք և դեպքերը իբրև բանավոր լուծումը:

Շեռներգը - Պնդեց, որ թուրքերը երբեք պետությանց հավանություն պայմանը չեն ընդունելու: *Coe'rcitive* միջոցներ գործածել հարկ պիտի ըլլա, *l'outrage au mandat* թե՛ նավային ցույց:

Եթե Գերմանիան հաճի իսկ պետությունները չպիտի հոժարին: Հետո կրկնեց իր փաստերը ըսելով *controle*-ի տակ պիտի ըլլա *inspecteur*-ը, և այս ալ հավանություն չափ գորավոր է:

Պատվիրակ - Բացատրեցի իրեն, որ այն ձևով որ այս *controle*-ը հաստատել կուզեն, անհկա բոլորովին *inefficace* է, ուստի ավելի ևս անհրաժեշտ է, որ Բարենորոգումները գործադրեք, նորեն անվանումը պետությանը հավանությամբ ըլլա:

Շեռնբերգ - Համառեցավ մինչև վերջ իր տեսակետին վրա և ըսավ, որ թուրքերը իրեն *amour-propre*-ին համար ալ չեն կրնար այս պայմանը ընդունել և թե թուրքաց հետ ապրելու կոչված, պետք էինք ավելի հաշտարար ոգի մը ցույց տալ:

Պատվիրակ - Բացատրեցի հայոց քաղաքական ուղղությունը, օսմանյան պետության մեջ ապրելու փափագը դեռ բոլորովին թողած չըլլալով կճանչնայինք աստոր մեր վրա դրված պարտականությունները, բայց *assentiment des Puissances*-ը անանկ էական է, որ անոր վրա *concession* անհնար է: Հարցուցի թե մի՞թե Գերմանիո շահը չի պահանջեր տևական վիճակի հաստատումը Հայաստանի մեջ, արդ եթե օտար պաշտոնյան Բ. Դոնեն կախում ունենա ոչինչ պիտի կրնա ընել: Իր ամսականը պիտի անկե ստանա և տաճկաց հաճելի լինելուն պիտի նայի: Մենք, ըսի, տաճկաց վիրավորել չենք ուզեր, ընդհակառակն կուզենք, որ անոնք ալ գիտնան թե իրենց շահը և մերինը նույնն է: Բայց անոնց *mentalite*-ն անուղղելի է: Անոնց խոսած Բարենորոգումներն ալ հինցած, փոտած բաներ են: Ամեն անգամ, որ ընկճված ազգ մը Բարենորոգում մը պահանջեր է, անոնք հիմնական *reformes*-ը ուզած են, ընդհանուր Բարենորոգում, Եվրոպացի պաշտոնյաներու աջակցություն, ասոր վրա ավելի խոսիլ չարժեր: Կոռուսան սակայն, որ վիճակը շատ ծանր է: Եթե հայերը տեսնեն, որ այս անգամ ալ Բարենորոգմանը հարցը ջուրը ինկած է ապստամբութենե գատ բանի մը վրա չպիտի մտածեն: Եվ ինչ-որ բախտ կտնօրինե այն կըլլա:

Շեռնբերգ - Կարծեք, որ ապստամբությունը կհաջողի:

Պատվիրակ - Ով ըսավ, որ ապստամբությունները կհաջողին, այսինքն հաջող կհանդիսանան եւ ոչ մեկ տեղ մասնավորապես Թուրքիո մեջ: Ապստամբները կընկճվին զինու գորությամբ, բայց ապստամբիչ երկիրը կանջատվի: Այս անգամ ալ անանկ պիտի ըլլա, Հայաստանը Ռուսիո պիտի անցնի և խնդիրը պիտի վերջանա:

Շեռնբերգ - Չեմ կարծեր, որ Հայաստանը Ռուսիո կրնա կցվիլ եթե Եվրոպան չուզե:

Պատվիրակ - Ձեզի կապահովցնեմ, որ այդպես պիտի ըլլա: Եվրոպան պիտի պարտավորվի ուզելու և իրողությունները նկատողության առնելու: Ըսի որ հայ ազգին հոգեբանությունը ծանր գինովության աստիճանի մը հասած էր և մեր ձեռքը չէր, հուսախաբության պարագային, մեր ուզածին պես վարել զայն: Ըսի որ քրդերը շատ պատրաստ էին շարժումի մը, բայց մենք անոնց հետ գործակցիլ չենք ուզեր և թե հույսերնիս Եվրոպային կտրած չենք:

Այս ձևով խոսեցանք երկար: Միշտ նա /պնդեց/ թե թուրքերը *assentiment des puissances* երբեք չպիտի ընդունեն: Բնձի թվեցավ թե գերման դեսպանը մոտ օրերըս խոսակցություն մը ունեցեր էր *Grand Vé'zir*-ին /որ իրոք շատ *enté'té*-արարած մըն է/ հետ, և խորապես համոզված է Թուրքիոյ դիմադրությանը: Ես ըսի որ պետք էր ընտրել կամ հրաժարվիլ Բարենորոգմանց խնդրեն, կամ այս պայմանը ընդունիլ: Ըսի որ գրեթե շատ մոտ բան մը 1880-ի հավաքական ծանուցագրին մեջ կար արդեն և թե *formule*-ը կրնային մեղմ ընել, որ Թուրքիոյ անձնասիրությունը չվիրավորվի:

Խոսակցությունը պահ մը գրեթե ընդհատվելու մոտ վիճակ մը ստանալէ վերջ վերսկսավ:

Պատվիրակ - Մեր քաղաքական ուղղությունը հետևյալն է, նախ հաշտ ըլլալ Օսմանյան կայսրության հետ, ուր պիտի ապրինք, երկրորդ՝ ռուս պետության հետ, որ սահմանակից է, և ուր այնքան հայեր կրնակին և հանգիստ կյանք կվարեն, երրորդ՝ Գերմանիոյ Բարեկամությանն հետույ Կրիկիո և Միջին Ասիո մեջ: Մենք համոզված ենք որքան գերմանական *pe'ne'tration*-ը Անադոլույէն դեպի ներս տարածվի, Անադոլույի մեջ ալ, այնքան հայոց ապահովությունը կուժովնա: Ահա այս երեք կետերուն վրա մեր քաղաքականությունը կհիմնվի:

Շեռնքերգ - Բոլորովին համամիտ եմ ձեզի, բայց ձեր համառելը ռուսական *projet*-ին վրա, Օսմանյան կառավարության դեմ հաշտարար ոգիի ապացույց չէ:

Պատվիրակ - Կրկնեմ, որ *assentiment des puissances*-ի պէս էական պայմանէ հրաժարվելով, հայկական Բարենորոգումներէն հրաժարված կըլլաք և դուք սա կցանկաք:

Շեռնքերգ - *Controle*-ը լեզվի, հողային հարցի *repré'sentation e'gale*, պաշտոնի մասնակցություն, վիլայեթներու ժողովներու *compe'tence*-ի ընդարձակումը, ի նչ-պէս, ասոնք արհամարհելի կհամարեք:

Պատվիրակ - Ասոնց արժեքը գիտեմ, բայց էական հայ տարրին իսլամ տարրէն ճգնվիլն է: Յորչափ իսլամ *fonctionnaire* և դատարաններու գլուխը եվրոպական *mentalite'* մը ուղղիչը չըլլա և հայերը չպաշտպանվին, բան մը եղած չըլլար: Կրկնեմ որ զիջում չենք կրնար ընել այս մասին: Բայց ցույց տալու համար թե մենք ալ Գերմանիոյ պէս Բարենորոգմանը սկզբնավորությունն տեսնելու կբաղձանք և զոհողության ալ պատրաստ ենք, կրնանք մյուս կետերու մասին խորհրդակցիլ: Այս կետը սակայն իմ անձնական կարծիքն է, միայն վերջին կամքը մեր Պատրիարքարանինն է: Հետո դիտել տվի որ Պրն. Լեփսիուսը ընդունած էր *assentiment*-ի պայմանը, ընդունած էր շատ մը ուրիշ բաներ և թե ցավալի էր, որ դեսպանատունն ետ էր առնէր այս ամենը:

Շեռնքերգը զարմանք հայտնեց:

Գրված թուղթ մըն ալ կա, ըսի տեսնել ուզեց:

Պատվիրակ - Ըսի որ եթե *volte-face*-ը հայ ազգը իմանար շատ պիտի հուզվի: Ըսի որ գաղտնի պահեցինք այս ամենը: Մենք փոքրամասնություն մըն ենք որ Գերմանիոյ և հայոց մերձեցման կաշխատինք: Արդ եթե այս իմացվեր, մեծ հարված մը պիտի ըլլար մեր գործին: Ես կուզեի որ ոչ միայն Գերմանիոյ ընդդիմու-

թյունը չըլլար, այլ անոր աջակցության պարտեհինք մեր հաջողությունը, գոնե մասամբ: Ըսավ որ թերևս այսպես պիտի ըլլա: Ըսի որ Գերմանիան և Ռուսիան պիտի լավ համաձայնին և ոչ թե վիճին եթե կուզվի դրական բան մը ըլել:

Շեռնբերգը համամիտ ըլլալը հայտնեց: Հետո ավելցուց թե հիմ կրնդունվի տաճկաց առաջարկություններն զանազան փոփոխություններով: Խստիվ մերժեցի սա բանաձևը: Ըսի որ սա կետն ալ անգիջանելի կնկատեմ, թե հայկական հատուկ բարենորոգում մը չի կրնար ընդհանուր բարենորոգմանց մեջ լուծել և անհետացնել: Այսպես անհրաժեշտ և անգիջանելի նկատեցի հավասարությունն *representation*-ի և պաշտոնի մեջ: Ըսավ որ այս վերջին կետը իրենք կրնդունին, առաջին երկու կետերը նոթագրեց: Կրկնեցի, իսկ վիլայեթներու և վալիներու մասին ես միմիայն իմ անձնական կարծիքն հայտնած եմ, իսկ ամեն պարագայի մեջ ատիկա եթե մեր ազգեն ալ ընդունվեր միմիայն գործին վերջնական պաշտոնապես անգիջանելի կետերն ասոնք են, զորս հայտնած ենք Պատրիարքարանի վերջին գրության մեջ:

Հետո ըսի միշտ թեությամբ թե եթե երբեք Պատրիարքարանն ալ ընդուներ վիլայեթներու պահպանումը, ատիկա միայն վերջին ժամուն պիտի հայտներ, գործին վերջ մը տալու համար և ոչ թե բանակցությանց էական:

Եթե պատրիարքարանը այս զիջումը ըներ այն ատեն պետք էր ընդհանուր քննիչին պաշտոնը տրվեր վալիի հրաժարցնելու և անոր տեղն անվանելու իրավունքը տալ և առհասարակ գծել անոր *attribution*-ները որոշ կերպով: Համամիտ թվեցավ, խոստացավ այս ամենը դեսպանին հաղորդել: Վերջին պահուն խոսակցությունը քաղցրացավ և մտերմությամբ բաժանվեցանք և զիս կրկին տեսնելու փափաքը հայտնեց:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Մեր խոսակցությունը Ա. մասին մեջ խիստ էր և հեռու իրարմե, վերջին մասերուն մեջ ավելի մեղմ և մոտիկանալու տրամադրության մեջ:

1. Պատրիարքարանի վերջին թուղթին մեջ նշանակված հինգ կետերը կմնան պաշտոնապես անփոփոխ [Երբ գերմանական դեսպանությունը կատարեց *volte-face* (դիմափոխություն), այսինքն՝ հրաժարվեց Լեփսիուսի միջոցով կատարված առաջարկներից, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, իրեն խաբված զգալով, օգոստոսի 29-ին տերությունների դեսպանատներին էր հանձնել բարենորոգումների հինգ անխախտ պայմանների մասին հուշագիր – Մ.Մ.]:

2. Վալիներու և վիլայեթներու պահպանումին կամ մեկ վիլայեթի և մեկ ընդհանուր վալի անվանելու խնդիրը, իմ անձնական կարծիքովս, կրնա նորեն քնվիլ, բայց Պատրիարքարանի դիտավորությունները չեմ գիտեր այս մասին:

3. Ամեն պարագայի մեջ բարենորոգումները ի գործ դնելու համար առնվելիք օտարական բարձր պաշտոնյան, ինչ ալ ըլլա իր անունը պետք է պետությանց հավանությամբ անվանվի այս պայմանը, որ շատ քաղցր ձևով մը կրնա օգտակար ըլլալ, անհրաժեշտ է մեզի, զիջում չի կրնար ըլլար ասոր վրա:

4. Այս պարագային /այսինքն երկու *inspecteur general*-ի ընտրության Պատրիարքարանը հավանի/ պետք է ընդլայնել անոր իրավասությունները վալին պաշտոնե հանելու հետ և նոր վալի նշանակելու իրավունքը տալ և ուրիշ կետերու մեջ ալ իր իրավասությունն ընդարձակելով ճշտել:

5. Հավասարությունը՝ *représentation*-ի և *fonctions publiques*-ի համար քրիստոնյա և ոչ քրիստոնյա տարերու մեջ, անհրաժեշտ պայման է, այս մասին որևէ զիջում չի կրնար ըլլալ: Ըսով որ այս մասին գերմանական դեսպանատունը դիտողություն չունի:

6. Պատրիարքարանը եթե երբեք իմ անձնական կարծիքովս ենթադրված զիջողությունն ընդունի, այնուհետև միայն անիկա կրնա հայտնել երբ որ տեսնե թե ամեն ինչ ընդունված է բացի այս կետեն:

7. Հայկական բարենորոգումները տաճկական ընդհանուր բարենորոգումի հարցին հետ չի կրնար շփոթվիլ կամ անոր մեջ լուծվիլ: Հայկական բարենորոգումները միջազգային հանգամանք մը ունին ուրկէ չենք կրնար հրաժարվիլ: Այս կետն ալ զիջողություն չընդունիր:

1 / 14 Մեպտեմբեր 1913թ.

Իրեն հաղորդեր է Շեռնբերգ տեսակցության արդյունքը:

Դժգոհություն հայտնեց զիջումներ լինելու տրամադրության մասին, զիջումները Ռուսիա պիտի վերապահել:

Պրն. Վանգենհայմը իրավունք պիտի ունենա ըսելու թե ռուսաց Դեսպանատունը ավելի անհաշտ է քան հայերը:

Պատվիրակ - Իրապես զիջողություն չկար, որովհետև ամեն մեկու դեմ փոխարինություններ առնելու պայմաններ դրված էր: Նախ անձնական հանգամանքով այդ տրամադրությունը ցուցուած է բացորոշապես շեշտելով Պատրիարքարանի վճիռը:

Թարգման - Բեռլինի մեջ այս պատճառով ճիշտ Շեռնբերգի ըսածին պես, ամեն զիջողություններ ետ դառնալու տրամադրություն կա և թե նույնիսկ առաջարկություն կա, որպեսզի թարգմանը նորեն միանալով, թուրքաց առաջարկություններն ալ քննեն, և թե հավանական է, որ Վանգենհայմին ռուսաց դեսպանը վաղը այս մտքով խոսք բանա:

Պատվիրակ - Ըստ կարելույն խիստ լեզու գործածած եմ, որպեսզի չենթադրե թե հայերը թուրքաց առաջարկները կրնան ընդունիլ, այս մասին կատարելապես համոզված մեկնեցավ:

Բացատրեցի թե զիջողություն ըսածներու դեմ ի՞նչ փոփոխություններ կուզեինք:

Ա. Առհասարակ որևէ զիջում ընելու համար պայման դրեր էի մյուս բոլոր պայմաններու վերջնականապես ընդունվիլը:

Բ. Վալիներու և վիլայեթներու պահպանման դեմ, պայման դրեր էի ընդհանուր քննիչի վալիներ հրաժարեցնելէ զատ նաև իրավունք մը անվանելու: *Assentiment*-ի ձևական փոփոխության մը ենթարկելու դեմ, պայման դրեր էի էու-

թյան պահպանումը: Ուրեմն զիջողություն մը ըրածի պէս էր, բայց իրապէս ոչինչ չէի զիջած:

Իմ տպավորությունս այն էր, որ թարգմանը առհասարակ Ռուսիո մինակ ձգված ըլլալը կհասկացներ ինձի, առաջարկելով շատ տկար և աննշան միջոցներ: Օրինակ խորհուրդ կուտար, որ Բտալիո *charge d’Affaires*-ը և Ավստրիո առաջին թարգմանը տեսնեինք: Դիտել տվի, որ այս երկու պետությանց ընդհանուր քաղաքականությունը, այս երկու անձնավորություններու հետ խոսելով չի կրնար փոխվիլ:

Համաձայն ըլլալով, ըսավ, որ կրնա սակայն օգուտ մը բերել:

Նույնպէս անհամբեր կսպասեր, որ դեսպանները իրենց դիմումները կատարեն:

Գոհությամբ պատմեց ինձի Վանա դեպքի մանրամասնությունները / Մելքոնի սպանության մասին և այլն/: Մանավանդ հայերու զինված ըլլալը:

Պատվիրակ - Հայաստանի մյուս մասերու մեջ այնպէս չէր, մանավանդ մյուս հայաբնակ վայրերը: Երկաթուղայիններու մասին Ռուսիո և Թուրքիո մէջ բանակցությունները սկսելը հաստատեց: Բայց ըսավ, որ հին խնդրին շարունակությունն է, նոր խնդիր մը չէ: Ամեն պարագայի մէջ, հայկական խնդրին վնասելու հանգամանք չունեն:

2 / 15 Սեպտեմբեր 1913թ.

Ռուսական դեսպանը Վանգենհայմին հետ տեսնվեր է պայմանով, որ մարդու մը չհաղորդվի: Անձնապէս ինձ լուր կղրկե թե դժգոհ չէ այսօրվան ունեցած խոսակցությունն: Ընդհանուր գիծերուն վրա խոսած են: Մասնավոր կետերը երկրորդ խոսակցության նյութ ըլլալու են: Անիկա այս շաբթվան մէջ պիտի կատարվի:

Այս միջոցին ռուս դեսպանը պիտի տեսակցի նաև մյուս դեսպաններու հետ, այնպէս, որ կրնա ըսվիլ թե դեսպաններու մէջ նախնական խոսակցությունը սկսած է և թե 4-5 օրէն բավական որոշ բաներ պիտի հասկացվին: Դեսպանը կկրկնէ մեզի որևէ զիջում չընել մանավանդ *assentiment* բառին վրա պնդել: Պրն. Մանդելշտամը իր կողմէն կխորհի թե վալիներ ու վիլայեթներ պահել, այդ վիլայեթներու ընդհանուր ժողովներ պահել չի նշանակեր անպատճառ: Եվ թե երկու *secteur* ի մէջ երկու ընդհանուր ժողովով բավականաւ պետք էր:

Պատվիրակ - Երբ որ վիլայեթներու և վալիներու ներկա ձևերը պահվին, դժվար պիտի ըլլա ժողովներու ջնջումը առաջարկել, որովհետև թուրքաց տեսակետն է ցույց տալ իրենց մարդոց թե Հայաստանի մէջ ոչինչ չի փոխվեր, բացի ընդհանուր քննիչի մը անվանումը:

Թարգմանը իր տեսակետին վրա պնդեց: Ըսավ թե այլևս Ավստրիո և Բտալիո դեսպաններուն դիմելու հարկ չկա, որովհետև դեսպանն ինքը պիտի խոսեր: Բայց հեղափոխական մարմիններուն դիմումին պետք ըլլալը շեշտեց, արդեն ըսավ - այս մասին Պետերբուրգ հեռագրած և համաձայնությունը ստացած ենք:

Պատվիրակ - Ֆրանսայի զմէս վերջնականապէս լքած ըլլալու մասին, Նուպար փաշային տեղեկություն մը ուզելը անհրաժեշտություն է:

Թարգմանը պատասխանեց որ պետք է ճշտել: Իրոք այս պահուս Ֆրանսան մինակ ձգած է Ռուսիան ձեր խնդրի մեջ, բայց ըսել է, որ եթե Ռուսիան վերջնական պահանջ դնե և հայտնե, որ ասիկա իր դաշնակցության պարտականության մասը կկազմե, Ֆրանսան չպիտի շարժի: Իրենք հույս ունեին, որ Ֆրանսան Ռուսիո հետ պիտի քալե, վասնզի պիտի խորհի, որ եթե մերժե, Ռուսիան շատ մը խնդիրներու մեջ պիտի լքե անոր, ինչպես Սուրիո մեջ: Նուպար փաշան պետք է ուժով դիմում կատարե Փարիզի մեջ հասկցնելով, որ հայերը հանդարտ պիտի չմնան և Ֆրանսացվոց փոխատվությունը պիտի վտանգվի ինչպես նաև արգելքներու պիտի հանդիպի երկաթուղիներու շինությունը: Հայասեր և այլև ուրիշ ընդդիմադիր ֆրանսիացիներ ալ պետք է ձեռքի տակ շարժման մեջ դնել: Նման բան մըն ալ Անգլիո մեջ ընել անհրաժեշտ է: Խորհուրդ տվավ որ փաշան Միլլուքովը տեսնա, տեսնա նաև ուրիշ կուսակցության վերաբերող ռուս քաղաքական անձնավորություններ որոնք բոլորն ալ ընդգրկած են հայկական հարցը, որպեսզի ռուս կառավարությունը մղեն ավելի ուժգին արմատական գործունեության մը:

Խոսեցա իրեն թե ինչ պիտի ընե Ռուսիան եթե բոլորովին մինակ մնա:

Պատասխանեց, որ այդ պարագայի համար դեռ որոշում մը տրված չկա: Ավելցուց, որ մինակ մնալը անպատճառ հայկական հարցը լքանել ըսել չէ: Վասնզի Ռուսիան մինակ ալ կարող է գայն առաջ մղել: Հարցուցի իրեն թե Կովկասի մեջ զորացրվում կատարելու մասին հրատարակություն մը կար: Պատասխանեց, որ, ո՛չ, զորացրվում մը կատարված չէ, և իրենք հոն բավական մեծ ուժ ունին: Հարցուցի թե ի՞նչ պիտի ըլլա եթե Ռուսիան մինակ մնալով չուզեր առանձին առաջ տանել հայկական հարցը: Ըսի, որ հայերը այս մտատանջության մեջ են և թե այդ պարագային հայերուն երկու ճամբա կմնար հետևելիք:

Ա. Անհաշտ կենալ մինչև վերջը թուրքաց հետ: Այս ճամբան խիստ վտանգավոր էր, ըստ որում թուրքերը մեզի իբր կասկածելի տարր նկատելով հայահալած նոր քաղաքականություն մը պիտի սկսեին: Ասկե հայ տարրը շատ պիտի վնասվեր, իսկ եթե հուսահատական քայլերու դիմեինք - որովհետև պատրաստ չենք - ձախողեինք պիտի անպատրաստ ըլլալով:

Բ. Թուրքաց հետ որևէ ձևով համաձայնություն կնքել, նույնիսկ անկարելիին առջև խոնարհելով և զոհելով մեր էական պահանջները, այդ կերպով նախ հալածանքե պիտի ազատեինք և թուրքաց հետ բարեկամ մնալով, Հայաստանի մեջ ինքզինքնիս զորացնելու ատեն պիտի ունենայինք, ապագային պատրաստվելու համար: Երկրորդ այս ճամբան իմ կարծիքովս բանավոր ըլլալով հանդերձ, Ռուսիո խորհուրդին կդիմեինք:

Թարգման - Եթե գործը այդ վիճակին գա, հարկավ Ռուսիան պետք եղած խորհուրդը պիտի տա հայերուն, բայց այսօր հոդ հասած չենք դեռ:

Պատվիրակ - Ամեն օր որ կանցնի հայոց տկարացման կծառայե, քանի որ թուրքերը Բալկանյան դժվարություններեն ազատված, ֆինանսական օպերասիոնը (operation) հաջողեցնելով, պիտի գորանան և ոչ մեկ զիջումի պիտի հոժարին:

Թարգման - Հայկական խնդրույն ինչ հանգամանք առնելը սա մեկ քանի օր-վան մեջ պիտի ճշտվի, ուստի պիտի սպասել քանի որ ժամանակի մեծ կորուստ մը չպիտի ունենանք [9: 196-242]:

BIBLIOGRAPHY

1. «Գարուն», թիվ 3, Երևան, 1990 («Garun», number 3 Yerevan, 1990) (in Armenian):
2. Զօհրապ Գ., Երկերի ժողովածու, հտ. Գ, Երևան, ԳԱԹ, 2002, 704 էջ (Krikor Zohrab, Collected works, volume 3, Yerevan, 2002, 704 p.) (in Armenian):
3. Զօհրապ Գ., Երկերի ժողովածու, հտ. Դ, Երևան, ԳԱԹ, 2003, 656 էջ (Krikor Zohrab, Collected works, volume 4, Yerevan, 2003, 656 p.) (in Armenian):
4. Զօհրապ Գ., Երկերի ժողովածու, հտ. Զ, Երևան, ԳԱԹ, 2004, 456 էջ (Krikor Zohrab, Collected works, volume 6, Yerevan, 2004, 456 p.) (in Armenian):
5. Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում, Երևան, Երևանի համալս. հրատ., 2006, 534 էջ (Krikor Zohrab in the memories and testimonies of contemporaries, Yerevan, Yerevan Univ. Ed., 2006, 534 p.) (in Armenian):
6. Զաւէն պատրիարք, Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Թեհրան 2014, 508 էջ (Zaven Patriarch, My Patriarchal Memories, Documents and Testimonials, Tehran 2014, 508 p.) (in Armenian):
7. Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական արխիվի վավերագրերը հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հտ. Ա, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2008, 250 էջ (Diplomatic Documents of the Historical-diplomatic archive of the Ministry of Foreign Affairs of Italy on the Armenian Question 1913-1923, pub., The Armenian Genocide Museum – Institute, 2008, 250p.) (in Armenian):
8. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1972, 810 էջ (Armenia in the Documents of International Diplomacy and Soviet foreign policy (1828-1923), ed. by Prof J. S. Kirakosyan, Yerevan, pub., "Hayastan" 1972, 810 p.) (in Armenian):
9. Մայր Աթոռ Ս. Էջնիածնի ձեռագրատուն, վավերագիր թիվ 288 (Mother See of Holy Etchmiadzin's Manuscript House, Document number 288) (in Armenian):
10. Շարուրյան Ա. Ս., Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Ս. Էջնիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջնիածնի տպարան, 1996, 546 էջ (Sharourian A. S., Chronicle of Grigor Zohrab's Life and Activities, S. Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin's Publishing House, 1966, 546 p.) (in Armenian):
11. Շարուրյան Ա., Գրիգոր Զոհրապի օրագրությունները հայկական բարենորոգումների (1912-1914) վերաբերյալ, Պատմաբանասիրական հանդես, թիվ 4, Երևան, 1990 (Sharourian A., Grigor Zohrab's Diaries about Armenian Reforms (1912-1914), Historical-Philological Journal, 1990, vol. 4, pp. 202-228) (in Armenian):

12. Փափազեան Վ., Իմ յուշերը, հտ. 2, Պեյրուք, տպ. Համագգային ընկերութիւն, 1952, 610 էջ (Papazean V., My memories, Beyrut, volume 2, publ. Hamazgayin ynkerutiwn, 1952, 610 p.) (in Armenian):
13. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии, отв. ред. В. А. Микаелян, Ереван, изд-во «Гитутюн» НАН РА, 1995, 643 с. (The Armenian Question and the Armenian Genocide in Turkey (1913-1919). Materials of the political archive of the Ministry of Foreign Affairs of Kaiser Germany, responsible. ed. V. A. Mikaelyan, Yerevan, "Gitutyun" Publishing House of NAS RA, 1995, 643 p.) (in Russian).
14. Архив Внешней Политики Российской Империи, ф. Канцелярия 1913г., д. 115. (Archive of the Foreign Policy of the Russian Emire, f. Chancellery 1913, Document 115) (in Russian).

Miqayel Martirosyan

Armenian State Pedagogical University After Khachatur Abovyan
martirosyanmiqayel02@gmail.com

ORCID: 0000-0003-3094-9973

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Միքայել Մարտիրոսյան

Բանալի բառեր՝ Գրիգոր Զոհրապ, Ապահովության հանձնաժողով, պատրիարք Զավեն Տեր Եղիայան, Վահան Փափազյան, Արշակ Զոպանյան, Պողոս Նուբար փաշա, Հայ ազգային պատվիրակություն, դեսպան Մ. Ն. Գիրս, Ա. Ն. Մանդելտամ, դեսպան Հ. Վանգենիայմ, Շյոնբերգ, փոխգլխումային համաձայնություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատուն, Նուբար Միքայելյան:

Պրոֆեսոր Ալբերտ Շարուրյանի «Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն» աշխատության հրատարակումից հետո թվաց, թե այլևս Գ. Զոհրապի կյանքի բոլոր դրվագները բացահայտված են: Սակայն հայկական բարենորոգումների շուրջ 1913 թ. ծավալված ռուս-գերմանական դիվանագիտական մրցապայքարի ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն համոզմանը, որ Գ. Զոհրապը ոչ միայն ակտիվորեն ներգրավված է եղել այդ գործընթացում, այլև կատարել է հայկական կողմից գլխավոր բանակցողի գործառույթը, ինչը վրիպել է պատմաբանների և բանասերների ուշադրությունից: Եթե Եվրոպայում Հայկական հարցը տերություններին ներկայացնող պաշտոնական մարմինը Պողոս Նուբար փաշայի գլխավորած Հայ ազգային պատվիրակությունն էր, ապա Կ. Պոլսի օտարերկրյա դեսպանությունների հետ հայկական բարենորոգումների շուրջ բանակցություններ վարող պաշտոնական մարմինը պատրիարքարանի Ապահովության հանձնաժողովն էր: Գ. Զոհրապը եղել է Ապահովության հանձնաժողովին սատարող Հարստահարական հանձնաժողովի հինգ ան-

դամներից մեկը և աստիճանաբար դարձել է Կ. Պոլսի դեսպանությունների հետ բանակցություններ վարող գլխավոր անձը: Բանակցային գործընթացին նրա մասնակցությունը գաղտնիացվել է ինչպես ռուսական դիվանագիտության, այնպես էլ հայկական շրջանակների և հենց Գ. Զոհրապի կողմից: Նա օսմանյան խորհրդարանի պատգամավոր էր, և գաղտնիացումը նպատակ ուներ նրան զերծ պահել դավաճանության երիտթուրքական ենթադրվելիք մեղադրանքներից:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող վավերագրերը վերաբերում են 1913 թ. օգոստոսի 20-ին, 21-ին, 24-ին, սեպտեմբերի 1-ին և 2-ին ռուսական դեսպանատան առաջին թարգման Ա. Ն. Մանդելշտամի և օգոստոսի 30-ին գերմանական դեսպանատան երկրորդ թարգման Շյոնբերգի հետ Գ. Զոհրապի հանդիպումներին: Այդ վավերագրերը պահվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրատանը: Վավերագրերից բացակայում է Գ. Զոհրապի անունը, սակայն տեղությունների արտգործնախարարությունների փաստաթղթերի և ժամանակակիցների հուշերի համադրումն ապացուցում է, որ պատրիարքարանի կողմից բանակցություններ վարող անձը եղել է Գ. Զոհրապը: Հանդիպումների ավարտից հետո Գ. Զոհրապը եկել է Ապահովության հանձնաժողով և պատմել է բանակցությունների ընթացքի և արդյունքների մասին: Նրա հաշվետվությունները արձանագրվել են և ուղարկվել Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդ Սուրենյանին: Առաջին անգամ հրատարակվող այս վավերագրերի ուրսումնասիրությունը վկայում է, որ Գ. Զոհրապը ծանրակշիռ ներդրում է ունեցել հայկական բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական փոխզիջումային համաձայնություն կայացնելու գործում: Այդ բանակցություններում նա ցուցաբերել է փոխշահավետության հիման վրա հաշտարար համաձայնություն կայացնելու դիվանագիտական հմտություններ: